



Հաստատված է

ՀԱԱՀ գիտական խորհրդի կողմից

01.07.2013 թ.(արձանագրություն № 14)

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ

ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ՀԱՆՁՆԱՐԱՐՄԱՆ,

ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ, ԿԱՏԱՐՄԱՆ, ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ

ՀԵՏԱԳԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ

Կանոնակարգը կազմեցին՝

Ա. Պ. Թարվերդյանը

Յու. Գ. Մարմարյանը

Ս.Հ.Դավեյանը

Բովանդակություն

1. Ընդհանուր դրույթներ
2. Կուրսային նախագծման նպատակն ու խնդիրները
3. Կուրսային նախագծի (աշխատանքի) կառուցվածքին ներկայացվող պահանջները
4. Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմատիկան
5. Կուրսային նախագծերի (աշխատանքների) բովանդակությունը
6. Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարման կազմակերպումը
7. Կուրսային նախագծի (աշխատանքի) պաշտպանությունը
8. Կուրսային նախագծերի (աշխատանքների) պահպանումը և հետագա ոչնչացումը
9. Հավելվածներ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1 Համալսարանի շրջանավարտները իրենց գիտակրթական, տեխնիկական և տեխնոլոգիական գիտելիքներով պետք է կարողանան նաև ինքնուրույն և ստեղծագործաբար լուծել գիտաարտադրական խնդիրներ, որոնք սահմանված են տվյալ մասնագիտության չափորոշիչներով և կարող են բավարարել գործատուների կողմից ներկայացվող պահանջներին:

Ուսանողների ինքնուրույն ստեղծագործական հմտությունների զարգացմանը մեծ չափով նպաստում է կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարումը, քանի որ այն հնարավորություն է ընձեռում արտադրական ստույգ (հստակ) առաջադրանքների լուծման միջոցով ուսանողին մղել պատասխանատվության՝ կատարած ճարտարագիտական, տեխնիկական, տեխնոլոգիական որոշումների համար, սերմանել նրանց մեջ ուսումնահետազոտական ու գիտահետազոտական աշխատանքների տարբեր տարրեր:

1.2 Կուրսային նախագծի (աշխատանքի) կատարումը նպաստում է ուսանողների կողմից ստացած տեսական գործնական գիտելիքների ամրապնդմանը, խորացմանը, ընդհանրացմանը, նախորդ առարկաների ուսումնասիրման արդյունքում ձևավորված կոմպլեքսային մակարդակի որոշմանը և այդ գիտելիքների կիրառմանը կոնկրետ մասնագիտական խնդիրների համալիր լուծման համար:

1.3 Կուրսային նախագծի (աշխատանքի) կատարումը ուսանողներին հնարավորություն է տալիս ձեռք բերելու ավելի խորը տեսական ու գործնական գիտելիքներ, զարգացնել ինքնուրույն և անհատական աշխատանքներ կատարելու հմտություններ, գործնական ու հետազոտական աշխատանքների գծով նախագծեր կատարելու և ստացված արդյունքները վերլուծելու ունակություններ և մասնագիտական գրականությունից օգտվելու կարողություններ:

1.4 Կուրսային նախագծի (աշխատանքի) կատարումը օգնում է ուսանողներին տիրապետել տեղեկատվության մշակման ու օգտագործման ժամանակակից մեթոդներին, զարգացնել նախագծման, հաշվարկների կատարման և գրաֆիկական ու տեքստային ձևավորման հմտությունները: Կուրսային նախագիծը (աշխատանքը) ուսանողի գործնական աշխատանք է, որը ներառում է առարկայական ոլորտի վերլուծական ու հետազոտական մշակում:

- 1.5 Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարման համակարգը ուսանողին նախապատրաստում է առավել բարդ տեխնիկական, տեխնոլոգիական, ինժեներական աշխատանքների կատարմանը՝ դիպլոմային նախագծի (աշխատանքի) կատարմանը, սովորեցնում է ուսանողին օգտվելու տեղեկատվական և տեխնոլոգիական գրականությունից, նորմատիվ տեխնիկական փաստաթղթերից, աղյուսակներից, տիպային նախագծերից, առաջադրանքներից, համապատասխան ոլորտի նորմատիվ և տեխնիկա-տնտեսական նյութերից:
- 1.6 Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարումը ուսումնական գործընթացի կարևորագույն բաղադրիչներից է և պետք է ունենա իր ուրույն տեղը:
- Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարումն անհրաժեշտ է իրականացնել պահանջվող որակով և պատշաճ մակարդակով:
- 1.7 Կուրսային նախագիծը (աշխատանքը) նպատակահարմար է անցկացնել տեսական դասընթացի և հնարավորության դեպքում արտադրական պրակտիկայի անցկացումից հետո:

2. ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾՄԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- 2.1 Ուսանողների կողմից կուրսային նախագծի (աշխատանքի) կատարման հիմնական նպատակներն են՝
- ինքնուրույն ուսումնագիտահետազոտական, փորձարարական և նախագծային աշխատանքների հմտությունների ձեռք բերումը,
 - թեմային վերաբերվող տեղեկատվական նյութերի հավաքագրումը և մշակումը, ունեցած տեղեկատվության համակարգումը և ընդհանրացումը,
 - տվյալ առարկայի շրջանակներում ունեցած գիտելիքների և հմտությունների ամբողջականացումը,
 - աշխատանքի արդյունքում ստացած նյութերի հետազոտությունը և քննադատական վերլուծությունը,
 - եզրակացությունների և առաջարկությունների տրամաբանական հիմնավորումը:
- 2.2 Կուրսային նախագծման խնդիրներն են՝
- տեղեկատվական նյութերի, մեթոդական ու գիտահետազոտական գրականության հետ ուսանողների աշխատելու հմտությունների զարգացումը,

- թեմայի իրականացման հետազոտման և նախագծման բոլոր փուլերում կազմակերպման ուսումնասիրումը,
- նոր առաջավոր տեխնոլոգիաների և սարքավորումների ուսումնասիրումը,
- նոր տեղեկատվական և համակարգչային տեխնոլոգիաների օգտագործումը,
- ուսանողների մոտ նախագծերը (աշխատանքները) որակով կատարելու պատասխանատվության զգացման զարգացումը:

3. ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ԿԱՌՈՒՑՎԱԾՔԻՆ

ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ

3.1 Ըստ բովանդակության կուրսային աշխատանքը կարող է լինել հետևյալ բնույթի.

- ա) ռեֆերատիվ
- բ) գործնական
- գ) փորձարարական
- դ) նախագծային
- ե) տեխնոլոգիական

3.2 Կուրսային աշխատանքի ծավալը պետք է կազմի նվազագույնը 25 էջ, իսկ առավելագույնը 35 ձեռագիր էջ՝ ներառած աղյուսակները, գրաֆիկները, նկարները և դիագրամները: Վերջիններիս թիվը չպետք է գերազանցի աշխատանքի ծավալի 20-30%:

3.2.1 Աղյուսակները պետք է կրեն վերլուծական բնույթ և հանդիսանան որոշակի թվային ցուցանիշների արդյունք:

3.2.2 Նախագծի հիմնական մասում տեղադրված ցանկացած ցուցադրական նյութ (սխեմաներ, նկարներ, գրաֆիկներ, աղյուսակներ) պետք է պարունակի առավելագույնս նոր օգտակար տեղեկատվություն:

3.2.3 Տեղեկատվական բնույթի աղյուսակները բերվում են հավելվածների տեսքով:

ա) Ռեֆերատիվ բնույթի կուրսային աշխատանքի կառուցվածքը

- **Ներածություն**- Այն ներառում է թեմայի ընտրության արդիականությունը և նշանակությունը:
- **Տեսական մաս** - Տեսական մասում բացահայտվում է առաջադրվող կատեգորիան՝ օգտագործված գրականության համեմատական վերլուծության միջոցով խնդրի մշակվածության մակարդակը տեսության մեջ և գործնականում:
- **Եզրակացություն** - Այն ներառում է ներկայացված աշխատանքի նյութերի արդյունքները և մասնագիտական ոլորտում օգտագործման վերաբերյալ առաջարկությունները:
- **Գրականության ցանկ** - Այն ներառում է դասագրքեր, ուսումնական ձեռնարկներ, ինտերնետային ռեսուրսներ, ինտերնետ էջերի հղումներ և այլն:
- **Հավելվածներ:**

բ) Գործնական բնույթի կուրսային աշխատանքի կառուցվածքը

- **Ներածություն** - Դրանում ներկայացվում է թեմայի ընտրության արդիականությունն ու նշանակությունը և ձևակերպվում են աշխատանքի նպատակներն ու խնդիրները:
- **Հիմնական մաս** - Այն կարող է բաղկացած լինել 2 բաժնից.
 - 1) Առաջին բաժնում (գլխում) ներկայացվում է մշակվող թեմայի տեսական հիմունքները,
 - 2) Երկրորդ բաժնում ներկայացվում է գործնական մասը՝ ներառած հաշվարկները, գրաֆիկները, աղյուսակները, սխեմաները և այլն:
- **Եզրակացություն** - Այն ներառում է արդյունքները, եզրակացությունները և աշխատանքի գործնական կիրառման վերաբերյալ առաջարկությունները:
- **Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկը:**
- **Հավելվածներ:**

գ) Փորձարարական բնույթի կուրսային աշխատանքների կառուցվածքը

- **Ներածություն** – Դրանում ներկայացվում է թեմայի արդիականությունը և նշանակությունը, ձևակերպվում են աշխատանքի նպատակները:
- **Հիմնական մաս** – Այն բաղկացած է 2 բաժնից՝
 - 1) Առաջին բաժնում ներկայացվում են մշակվող թեմայի տեսական հիմունքները, հարցի պատմությունը, խնդրի մշակման մակարդակը տեսության մեջ և գործնականում,
 - 2) Երկրորդ բաժնում ներկայացվում է գործնական մասը, որը ներառում է փորձի կատարման կամ ծրագրի մշակման պլանը, աշխատանքի մեթոդների բնութագիրը, ընտրված մեթոդի հիմնավորումը, աշխատանքի փուլերը, կատարված աշխատանքի մշակումը և վերլուծությունը:
- **Եզրակացություն** – Այն ներկայացնում են արդյունքները, եզրակացությունները և ստացված արդյունքների գործնական կիրառման առաջարկությունները:
- **Օգտագործված նյութերի և գրականության ցանկը:**
- **Հավելվածներ:**

դ) Նախագծային բնույթի կուրսային նախագծի կառուցվածքը

- **Ներածություն** - Դրանում ներկայացվում է թեմայի ընտրության արդիականությունը և նշանակությունը:
- **Հաշվարկային մաս** - Հաշվարկային մասը կատարվում է ըստ մասնագիտության ուղղվածության:
- **Նկարագրական մաս** - մշակված կառուցվածքի (կոնստրուկցիայի) նկարագրությունը և դրա աշխատանքի սկզբունքը:
- Նյութերի ընտրություն, պատրաստման տեխնոլոգիական առանձնահատկությունները:
- **Գործնական մաս** – Ներառում է գծագրեր, սխեմաներ և ստեղծագործական գործունեության այլ նյութեր:
- **Եզրակացություն:**
- **Օգտագործված աղբյուրների ու գրականության ցանկը:**
- **Հավելվածներ:**

ե) Տեխնոլոգիական բնույթի կուրսային նախագծի կառուցվածք

- **Ներածություն**- Դրանում ներկայացվում է ընտրված թեմայի արդիականությունը և նշանակությունը:
- **Նկարագրական մաս** – Ներառում է հանգույցի կամ դետալի նկարագրությունը, որի համար մշակվում է տեխնոլոգիական գործընթացը:
- Հանգույցի, դետալի արտադրման համար մշակվող տեխնոլոգիական գործընթացը:
- Նախագծվող սարքավորման նկարագրությունը, հարմարանքները և այլն:
- **Գործնական մաս** - Գծագրեր, սխեմաներ և ստեղծագործական գործունեության այլ նյութեր:
- Եզրակացություններ:
- Օգտագործված աղբյուրների և գրականության ցանկ,
- Հավելվածներ:

4. ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԹԵՄԱՏԻԿԱՆ

4.1 Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարման համակարգի առանցքային հարցերից մեկը թեմատիկայի ընտրությունն է:

Կուրսային նախագծման թեմատիկան պետք է համապատասխանի և բխի տվյալ առարկայի (մոդուլի) ուսումնական խնդիրներից և տնտեսության ու գիտության գործնական պահանջներից: Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմատիկայի արժեվորումը նախ և առաջ պայմանավորված է դրա գիտական լինելով, արդիականությամբ և ուղղվածությամբ, որոնց ամբողջականությունը նպաստում է ուսանողների ինքնուրույն ստեղծագործական հմտությունների ձեռքբերմանը և մասնագիտական մտածելակերպի զարգացմանը:

Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմատիկան պետք է ուղղված լինի ուսումնասիրվող առարկայի տեսական դրույթների գործնական ամրապնդմանը, շաղկապված լինի գիտության և արտադրության ժամանակակից պահանջներին, համապատասխանի ուսումնասիրվող օբյեկտի արդիականությանը, գիտական և գործնական նշանակությանը և ուսանողներին հնարավարություն ընձեռնի դրսևորելու իրենց գիտելիքներն ու ունակությունները:

4.2 Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմատիկան պետք է հիմնվի ագրարային և այլ ոլորտի կազմակերպությունների, ուսանողների արտադրական պրակտիկաների արդյունքների և ամբիոնի, համալսարանի ու այլ գիտահետազոտական հիմնարկների գիտական աշխատանքների վրա:

4.3 Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմատիկան պետք է համապատասխանի տվյալ դասընթացի ուսումնական խնդիրներին և կապված լինի տնտեսության ու գիտության գործնական պահանջներին:

Ամեն թեմայում պետք է ներառված լինի գիտական նորարարության էլեմենտ:

4.4 Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմաներին ներկայացվող հիմնական պահանջներից մեկը՝ դրանց կոմպլեքսայնությունն է, այսինքն՝ իրար հետ փոխկապակցված մի շարք խնդիրների համալիր լուծումը:

Դրա հետ մեկտեղ, թեմայի առանձին հարցերից պետք է հանդիսանա մասնակի խնդրի ավելի մանրամասն մշակումը:

4.5 Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմաները առաջադրվում և հաստատվում են ուսումնական պլանով նախատեսված առարկան դասավանդող ամբիոնի կողմից:

Կուրսային նախագծի (աշխատանքի) առաջադրանքները պետք է լինեն անհատականացված, համաձայնեցված ուսանողի ունակությունների հետ, առանց ընդհանուր պահանջների նվազեցման:

Թեմաների առաջադրանքներում պետք է բացառվի կրկնողությունը: Տարեց տարի նույն առաջադրանքների ու թեմաների կրկնությունը իջեցնում է կուրսային նախագծերի (աշխատանքների) թե՛ ուսումնական, թե՛ գործնական արժեքը:

4.6 Կուրսային նախագծերի (աշխատանքների) թեմատիկան պետք է կառուցվի կազմակերպությունների, ֆերմերային և այլ տիպի տնտեսությունների փաստացի նյութերի ու տվյալների վրա՝ ոլորտի արդի փորձն ու նվաճումներն արտացոլող գրականության և վերլուծական աշխատանքի ընդարձակ ներառմամբ: Յուրաքանչյուր առաջադրանք պետք է լինի մանրակրկիտ մտածված, մեթոդապես և գիտականորեն հիմնավորված և բավարարի մասնագետների պատրաստման ժամանակի պահանջներին:

Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարման համար հիմնական ելակետային տվյալները պետք է ձևակերպվեն ամբիոնի կողմից՝ կուրսային նախագծման առաջադրանքներում:

- 4.7 Առաջադրանքում անհրաժեշտ է հստակ ձևակերպել նախագծի (աշխատանքի) անվանումը, դրա ծավալը, բովանդակությունը և այլ անհրաժեշտ բնութագրեր, տեխնիկական տվյալներ և կատարման ժամկետը:

Առաջադրանքում անհրաժեշտ է նաև նշել նախագծի հաշվարկագրաֆիկական մասի կատարման համար ելակետային տվյալները, գծագրերի քանակը և բնութագիրը:

5. ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

- 5.1 Կուրսային նախագծի (աշխատանքի) առաջադրանքը պետք է համապատասխանի ուսանողների տեսական պատրաստվածության մակարդակին և նախագծի կատարմանը հատկացված ժամանակին:

- 5.2 Կուրսային նախագծի կատարման համար անհրաժեշտ հիմնական ելակետային տվյալները կուրսային նախագծի ղեկավարի կողմից պետք է գրանցվեն առաջադրանքի թերթիկում (հավելված 1):

- 5.3 Նախագիծը կատարելիս ուսանողը պետք է սովորի տրամաբանված, անընդհատ, մոտիվացված և հիմնավորված լուծելու նախագծի առաջադրանքում դրված խնդիրները, բացատրագրում հստակ, պարզ, հակիրճ և ակնառու ձևով հիմնավորել բոլոր ընդունված որոշումները և տեխնիկապես գրագետ ձևավորել նախագծի գրաֆիկական նյութերը:

- 5.4 Կուրսային նախագիծը պետք է կազմված լինի հաշվարկաբացատրական և գրաֆիկական մասերից:

Գծագրերը պետք է կատարվեն նորմատիվների պահանջներին համապատասխան: Դրանք պետք է լինեն շատ հստակ, պարզ և կոմպակտ: Ընդհանուր տեսքի, հանգույցների և առանձին դետալների բոլոր գծագրերը պետք է ունենան անհրաժեշտ քանակի պրոյեկցիաներ, բայց առանց գծագրերի ավելորդ ծանրաբեռնվածության:

5.5 Գծագրերը, որպես կանոն պետք է կատարվեն մատիտով, անհրաժեշտ սպեցիֆիկացիաներով, չափերով և նշանակումներով:

Աշխատանքային գծագրերի վրա պետք է տրված լինեն տեխնոլոգիական քարտը կազմելու և դետալների պատրաստման համար անհրաժեշտ բոլոր չափերը, նշանակումները և ցուցումները:

5.6 Կուրսային նախագծի բացատրական մասը պետք է շարադրված լինի տեխնիկապես գրագետ, հստակ և սեղմ: Բացատրագրում պետք է ներառված լինեն նախագծվող կառուցվածքի կամ ագրեգատի հիմնավորումները: Այդ հիմնավորումները կարող են տրված լինել ընտրված լուծման համեմատական բնութագրերի տեսքով՝ գոյություն ունեցող ուրիշ կամ հնարավոր տարբերակների համեմատությամբ, ցույց տալով նախագծվող տարբերակի առավելությունները՝ էժանացման, պատրաստման պարզության, սարքավորումների շահագործման հարմարավետության, նորոգման և աշխատանքի անվտանգության տեխնիկայի տեսանկյունից:

5.7 Կուրսային նախագծում (աշխատանքում) պետք է պարունակվեն ուսուցման ընթացքում ուսանողների ձեռք բերած տեսական գիտելիքների ընդհանրացումները և խնդիրների լուծման գործնական հմտությունների ցուցադրումը:

Կուրսային աշխատանքը պետք է բացահայտի ուսանողների կողմից տեսական գիտելիքների յուրացման աստիճանը, ընտրված թեմայի վերաբերյալ հայրենական և արտասահմանյան գրականության իմացությունը, ինչպես նաև իր կատարած աշխատանքի արդյունքները բացատրագրում հստակ ձևակերպելու ունակությունները:

5.8 Բոլոր կուրսային նախագծերում նախագծվող օբյեկտի վերաբերյալ պետք է հաշվի առնվեն անվտանգության տեխնիկայի պահանջները:

6. ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ) ԿԱՏԱՐՄԱՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

6.1 Կուրսային նախագծերի (աշխատանքների) թվաքանակը սահմանվում է համապատասխան մասնագիտության չափորոշիչով և ուսումնական պլանով:

Կուրսային նախագծերի (աշխատանքների) թիվը, որպես կանոն, չպետք է գերազանցի 5-6-ը: Ընդ որում դրանցից 1-2-ը սահմանված է ընդհանուր մասնագիտական, իսկ 4-5-ը՝ մասնագիտական առարկաների համար: Կուրսային նախագծերի

(աշխատանքների) թվաքանակի չհիմնավորված ավելացումը, անխուսափելիորեն հանգեցնում է դրանց մակերեսային կատարմանը և նախագծային նյութի թերմշակմանը:

6.2 Կուրսային նախագծերը (աշխատանքները) կատարվում են ուսանողին ինքնուրույն աշխատանքի կատարման համար հատկացված ժամերի հաշվին, որից շաբաթական 1 ժամը պարտադիր կերպով դասացուցակով հաստատված լսարանային խորհրդատվություն է:

6.3 Կուրսային նախագծման սկիզբը հանդիսանում է դեկավարի կողմից ուսանողներին նախագծման առաջադրանքի հանձնարարումը (հավելված 1):

Առաջադրանքի հանձնարարման ժամանակ հարկավոր է հաստատել աշխատանքի կատարման ժամանակացույցը՝ նախագծման գլխավոր փուլերի ժամկետների նշումով (հավելված 4):

Կուրսային նախագծերի (աշխատանքների) ներկայացման ժամկետները հաստատվում են տվյալ մասնագիտության ուսումնական պլանին համապատասխան:

6.4 Կուրսային նախագծի (աշխատանքի) առաջադրանքը ուսանողներին հանձնարարվում է ուսումնական կիսամյակի սկզբից երկու շաբաթների ընթացքում:

Առաջադրանքը դեկավարի կողմից տրվում է ստորագրությամբ, նշվում է հանձնարարման օրը և գրանցվում ամբիոնի համապատասխան մատյանում:

6.5 Որպես պարտադիր պահանջ, կուրսային նախագիծ (աշխատանք) ունեցող առարկան, պետք է ապահովված լինի համապատասխան մեթոդական ուղեցույցով:

Ամբիոնը պարտավոր է ուսանողներին ապահովել կուրսային նախագծի (աշխատանքի) կատարման համար անհրաժեշտ մեթոդական ցուցումներով:

Մեթոդական ցուցումներում պետք է ընդգրկված լինեն նախագծի (աշխատանքի) խնդիրները, ելակետային տվյալների բնութագրերը, նախագծի առանձին բաժինների ու բացատրագրի ծավալներն ու բովանդակությունը, գծագրերի թիվը, բնութագիրը և մասշտաբը, ինչպես նաև նախագծի կատարման հերթականությունն ու ժամանակացույցը:

6.6 Կուրսային նախագծի (աշխատանքի) կատարման ժամանակ ուսանողն իրավունք ունի օգտվելու համալսարանի համակարգչային և ինտերնետային սենյակներից և գիտական ու էլեկտրոնային գրադարաններից:

6.7 Կուրսային նախագծի (աշխատանքի) կատարման ժամանակ ուսանողներին օգնելու նպատակով ամբիոնի կողմից նշանակվում է կուրսային նախագծի (աշխատանքի) ղեկավար, որը կազմակերպում և իրականացնում է խորհրդատվություն:

Խորհրդատվությունների ժամանակացույցը կազմվում է կիսամյակի կտրվածքով, հաստատվում է ամբիոնի նիստում և փակցվում է ամբիոնի հայտարարությունների ցուցափեղկում:

Կուրսային նախագծի ղեկավարումը, որպես կանոն, պետք է հանձնարարել ամբիոնի ավելի բարձր որակավորում ունեցող գիտական, արտադրական ու մեթոդական փորձ ունեցող դասախոսներին:

Կուրսային նախագծի (աշխատանքի) ղեկավարը պետք է ձգտի զարգացնել ուսանողների ստեղծագործական հմտություններն ու կարողությունները:

6.8 Համալսարան-արտադրություն կապի բարելավման և մերձեցման, ինչպես նաև փորձի փոխանակման տեսանկյունից, կուրսային նախագծերի (աշխատանքների) ղեկավարման նպատակով ցանկալի է հնարավորինս ներգրավել տվյալ ոլորտի արտադրությունում անմիջապես աշխատող փորձառու մասնագետներին:

6.9 Նախագծման առաջին փուլում ամբիոնի փորձառու դասախոսի կողմից անհրաժեշտ է իրականացնել ներածական դասախոսություն, որի ժամանակ պետք է պարզաբանել.

- տվյալ առարկայի համար կուրսային նախագծի (աշխատանքի) նշանակությունը,
- նախագծին, գծագրերին, հաշվարկաբացատրական տնտեսական մասի բովանդակությանը և ձևակերպմանը ներկայացվող պահանջները, ինչպես նաև հատկացված առաջադրանքի էությունը,
- առավել բնորոշ առաջադրանքների հանգույցային հարցերը և ընդհանուր ցուցումներ առաջադրանքի կատարման վերաբերյալ:

Այստեղ լուսաբանվում է նաև առաջադրանքի կապը համապատասխան առարկաների հետ և առաջարկվում է հիմնական գրականությունը:

6.10 Կուրսային նախագծման (աշխատանքի) սկզբնական շրջանում, նախագծի (աշխատանքի) ղեկավարի կողմից, առաջադրանքի վերաբերյալ ուսանողի հետ պետք է անցկացվի անհատական քննարկում, որը ղեկավարման հետագա հաջողությունը ապահովելու համար ունի կարևոր նշանակություն:

Այդ գրույցի քննարկման ընթացքում ղեկավարը պարզում է տվյալ առաջադրանքի կատարման համար ուսանողի պատրաստվածության աստիճանը, նրան առաջարկվում է անհրաժեշտ գրականությունը և նյութերը և տրամադրվում է խորհրդատվություն առաջադրանքի կատարման հերթականության վերաբերյալ, որի արդյունքում կարող է ճշգրտվել կամ ուսանողի կողմից ընտրվել նախագծման աշխատանքներին թեմա:

6.11. Կուրսային նախագծերի (աշխատանքների) կատարումը ցանկալի է կազմակերպել ամբիոնում՝ դրանց կատարման համար անհրաժեշտ տեղեկագրերով, ուսումնամեթոդական նյութերով և նախագծման համար անհրաժեշտ սարքավորումներով կահավորված լսարանում:

6.12. Աշխատանքի կատարման ընթացքում, ամբիոնները կարող են անցկացնել ինչպես խմբային, այնպես էլ անհատական խորհրդատվություն: Խմբային խորհրդատվության անհրաժեշտությունը առաջանում է աշխատանքի ընթացքում այն դեպքերում, երբ ուսանողների մեծամասնության մոտ հանդիպում են ընդհանուր դժվարություններ կամ երբ աշխատանքների կատարման ստուգման ժամանակ ղեկավարը գտնում է ուսանողների մոտ ընդհանուր, տիպային սխալներ:

Խմբային խորհրդատվությունները չպետք է վերածվեն դասախոսության:

Այդ խորհրդատվությունների ժամանակ անհրաժեշտ է տալ հստակ ցուցումներ հանդիպած դժվարությունների հաղթահարման, վերլուծության տիպային սխալների վերաբերյալ, բացատրվում է թե ինչպես լավագույնս օգտվել տեղեկագրերից, ալբոմներից, գնացուցակներից և տիպային նախագծերից:

Անհատական խորհրդատվությունները պետք է անցկացնել կանոնավոր կերպով, բոլոր ուսանողների համար, շաբաթը 1-2 անգամ:

Անհատական խորհրդատվությունները պետք է օգնեն ուսանողների ինքնուրույն աշխատանքի զարգացմանը և աշխատանքի պլանավորվածությանը, կանխամտածվածությանն ու հիմնավորվածությանը:

6.13. Կատարվող աշխատանքի կամ դրա առանձին մասի պարբերաբար ստուգումը հանդիսանում է ղեկավարման լավագույն ձևերից մեկը: Ուսանողից պետք է պահանջել ղեկավարին ներկայացնելու մինչ այդ օրը կատարված աշխատանքը (հաշվարկներ, էսքիզներ, գծագրեր և գրառումներ):

Ուսանողի կողմից աշխատանքի մեկ փուլի կատարումը ստուգելուց և ստորագրելուց հետո, ղեկավարը ուսանողին թույլատրում է անցնելու աշխատանքի կատարման հաջորդ փուլ:

- 6.14. Ամբիոնի վարիչը պետք է ստուգի կուրսային նախագծման առաջադրանքների ժամանակին հանձնարարումը, խորհրդատվությունների գրաֆիկի առկայությունը, կուրսային նախագծման ընթացիկ վիճակը, պետք է պարբերաբար կարգավորի նախագծման ուղղվածությունը և մեթոդիկան՝ ըստ առանձին ղեկավարների, ամբիոնի նիստերին տալ համապատասխան ցուցումներ:
- 6.15. Կուրսային նախագիծը (աշխատանքը) ղեկավարին հանձնելուց առաջ պետք է ստորագրվի ուսանողի կողմից: Եթե նախագիծը բավարարում է ներկայացվող պահանջներին, ապա այն թույլատրվում է պաշտպանության, որի մասին ղեկավարը գրառում է կատարում բացատրագրի և գծագրերի վրա:
- 6.16. Կուրսային նախագծի և կուրսային աշխատանքի տիտղոսաթերթի օրինակելի տարբերակները բերված են համապատասխանաբար հավելված 2-ում և հավելված 3-ում:

7. ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

- 7.1 Կուրսային աշխատանքի պաշտպանությունը համարվում է նախագծի կատարման, ստուգման հատուկ ձև: Պաշտպանությունը պետք է սովորեցնի (վարժեցնի) ուսանողին բազմակողմանի հիմնավորելու իր կողմից ներկայացվող խնդիրների լուծումը և կատարած աշխատանքի խորին տիրապետումը:

Կուրսային նախագծի (աշխատանքի) պաշտպանությունը իրականացվում է ամբիոնում, սահմանված գրաֆիկով:

Նախագծերի (աշխատանքի) պաշտպանությունը կատարվում է ամբիոնի կողմից սահմանված, 2-3 հոգուց բաղկացած հատուկ հանձնաժողովում՝ կուրսային նախագծի (աշխատանքի) ղեկավարի պարտադիր մասնակցությամբ:

Հրապարակային պաշտպանությունը հնարավորություն է ընձեռում խմբի ուսանողներին ծանոթանալ ներկայացվող աշխատանքի խնդիրներին, առաջարկվող լուծումներին և քննարկումներին:

Պաշտպանության էությունը կայանում է ուսանողի կողմից կատարած նախագծի (աշխատանքի) համառոտ զեկուցմանը (8-10 րոպե) և հարցերի պատասխաններին և քննարկման, որի ժամանակ կարող են օգտագործվել համակարգչային տեխնոլոգիաներ: Կուրսային նախագծի (աշխատանքի) պաշտպանությունից հետո ուսանողի գիտելիքը հանձնաժողովի կողմից գնահատվում է հարյուր բալային համակարգով և գրանցվում է ստուգման գրքույկում և առարկայի վերջնական գնահատման բազմագործոնային տեղեկագրում:

Կուրսային նախագծերի (աշխատանքների) պաշտպանությունը իրականացվում է մինչև կիսամյակային քննությունների սկիզբը:

7.2 Կուրսային նախագծի (աշխատանքի) պաշտպանությանը հատկացվում է 15-20 րոպե: Ուսանողը պարտավոր է տալ նախագծի (աշխատանքի) հետ կապված բոլոր պարզաբանումները:

7.3 Պաշտպանության ժամանակ ուսանողը (մագիստրանտը) պետք է հակիրճ ներկայացնի իր աշխատանքի բովանդակությունը, նրանում դրված խնդիրները, ներկայացնի տեղեկություններ այն աղբյուրների վերաբերյալ, որոնց հիման վրա այն կատարվել է :

Ուսանողը պետք է պատրաստ լինի պատասխանելու աշխատանքի վերաբերյալ առավել ընդհանրական և հատուկ հարցերի:

7.4 Պաշտպանության արդյունքների տվյալները, մինչև սեսիոն քննությունների սկիզբը, ամբիոնը տեղեկացնում է համապատասխան դեկանատ: Տվյալ առարկայից կուրսային նախագիծը (աշխատանքը) դրական գնահատականով (40) չպաշտպանած ուսանողը չի թույլատրվում մասնակցելու տվյալ առարկայի ամփոփիչ քննությանը:

7.5 Սահմանված ժամկետներում կուրսային նախագիծը (աշխատանքը) տարբեր պատճառներով չպաշտպանած ուսանողի հարցը ըստ կարգի քննարկվում է ամբիոնում և համապատասխան ֆակուլտետում և պաշտպանության արդյունքում գնահատման դեպքում ուսանողին թույլատրվում է մասնակցել տվյալ առարկայի ամփոփիչ քննությանը՝ պարտքերի մարման շրջանում:

Սահմանված ժամկետներում կուրսային նախագիծը (աշխատանքը) չներկայացրած և ոչ հարգելի պատճառներով կուրսային նախագիծը չպաշտպանած ուսանողը ձեռք է բերում ակադեմիական պարտք:

7.6 Կուրսային նախագծերի (աշխատանքների) պաշտպանության արդյունքները քննարկվում են համապատասխան ամբիոնի և ֆակուլտետի գիտական խորհրդի նիստերին:

8. ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԵՐԻ (ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ)

ՊԱՀՊԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԵՏԱԳԱ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

8.1 Կուրսային նախագծերը (աշխատանքների) պաշտպանությունից հետո գրանցվում են հատուկ մատյանում և 6 ամիս պահպանվում են ամբիոնում հատուկ առանձնացված տարածքում՝ ամբիոնի վարիչի հսկողությամբ:

8.2 Կուրսային նախագծերը (աշխատանքները) ամբիոնում 6 ամիս պահելուց հետո, մեկ ամսվա ընթացքում ակտավորվում են ուսումնամեթոդական կենտրոնի, համապատասխան դեկանատի և ամբիոնի ներկայացուցիչներից կազմված հանձնաժողովի կողմից:

8.3 Լավագույն մեկ-երկու աշխատանք կարող է պահպանվել ամբիոնում որպես ուսումնական ցուցադրական նմուշ:

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հաստատում եմ

Ամբիոնի վարիչ _____

(ստորագրություն) ԱԱՀ
“ ___ ” _____ 20__ թ.

Ֆակուլտետ _____

Ամբիոն _____

Մասնագիտություն _____

ԱՌԱՋԱԴՐԱՆՔ

Կուրսային նախագծի (աշխատանքի)

_____ առարկայից

Ուսանող _____

Ազգանուն, անուն

կուրս, խումբ

1. Նախագծի (աշխատանքի) թեմա _____
2. Ելակետային տվյալները և հիմնական պահանջները _____
3. Նախագծի (աշխատանքի) ծավալը _____
4. Նախագծման ժամկետը և ժամանակացույցը _____
5. Նախագծի պաշտպանության ժամկետը _____

Նախագծի (աշխատանքի) ղեկավար _____

Ազգանուն, անուն

ստորագրություն

Առաջադրանքը ստացել եմ _____

ուսանողի ազգանուն, անուն

ստորագրություն

Առաջադրանքի տրման ամսաթիվ “ ___ ” _____ 20__ թ.

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ _____

Ամբիոն _____

Մասնագիտություն _____

ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԻԾ (ԱՇԽԱՏԱՆՔ)

Թեմա _____

Ուսանող _____

Ազգանուն, անուն

կուրս, խումբ

Ղեկավար _____

Ազգանուն, անուն

գիտ. աստիճան, կոչում

Պաշտպանության ամսաթիվ

“___” _____ 20__ թ.

Պաշտպանության գնահատական _____

“___” _____ 20__ թ.

ստորագրություն

ստորագրություն

ԵՐԵՎԱՆ 201 __

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ֆակուլտետ _____

Ամբիոն _____

Մասնագիտություն _____

ԿՈՒՐՍԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա _____

Ուսանող _____

Ազգանուն, անուն

կուրս, խումբ

Ղեկավար _____

Ազգանուն, անուն

գիտ. աստիճան, կոչում

Պաշտպանության ամսաթիվ

“___” _____ 20__ թ.

Պաշտպանության գնահատական _____

“___” _____ 20__ թ.

ստորագրություն

ստորագրություն

ԵՐԵՎԱՆ 201__

Ֆակուլտետ _____

Ամբիոն _____

Մասնագիտություն _____

Հաստատում եմ

Կուրսային նախագծի (աշխատանքի) ղեկավար

Ազգանուն, անուն

պաշտոն

ստորագրություն

“___” _____ 201_ թ.

ԺԱՄԱՆԱԿԱՅՈՒՅՑ

ԿՈՒՐՍԱՅԻՆ ՆԱԽԱԳԾԻ (ԱՇԽԱՏԱՆՔԻ) ԿԱՏԱՐՄԱՆ

Ուսանող _____

կուրս, խումբ

ազգանուն, անուն, հայրանուն

Կուրսային նախագծի քաժնի (զլխի) համարը	Ծավալը ժամերով	Կուրսային նախագծի (աշխատանքի) մեջ ներառված աշխատանքների անվանումը	Ստուգման ժամկետ
I			
II			
III			

Ուսանող _____

Ազգանուն, անուն

կուրս, խումբ

ստորագրություն